ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 29 Նոյեմբերի 1888 Երեքշաբթի 29 Նոյեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր. 50 կ., հատ վ՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրատեղիան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամէն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամէն լեզուներով։ Յայտարարութիւնների գնաւն 2 կ., բեկորների համար կրկնապատիկ։

ԿԸՂԸՒՐԿԸՆ-ԳՐԸԿԸՆԸԿԸՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ԹԵՐԹ
Թիֆլիսում
ԱՌԱՋԻԿԱՑ 1889 ԹՈՒԱԿԱՆԻՆ
(Վեցերորդ տարի)
Կը հրապարակուի նոյն չերչով և ծրագրով
Խմբագրութիւնը կ'ստանայ և սեղհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպալի, Թիւրքիալի, Ամերիկալի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում մինչեւ «Նոր-Դար»-ի խմբագրատունը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր «Ժողինաթ»։ Դալոց և կլուբ։ Կրթական խորհրդաժողովներ ժողովրդի կեանքից ժողովրդի համար (վերջ)։

Քաղաքական.—Նոյեմբերի 20-ը Աւստրիայում և Ֆրանսիայում։

Թառն լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագրները։

Բանասիրական.—Առաջին սէր (շարուն.)։

Յայտարարութիւններ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ *)

(Տուրգէնեւից)

V

Ինչպէս խոստացել էր, իշխանուհին այցելել էր մօրս և նրան դիւր չէր եկել, նա նեղկայ չէր նրանց տեսակցութեան, բայց Ճաշի վրայ մայրիկս պատմում էր հօրս, թէ այդ իշխանուհի Զասեկինան երեն une femme très voulgaire (մի խիստ գռեհիկ կին) է երեւում, թէ նա ձանձրացրեց երեն անդադար խնդրելով, որ բարեխօս լինի իշխան Սերգէյին, թէ նա շատ դատեր և գործեր ունի—de vilaines affaires d'argent—(փողային գործեր) և թէ պէտք է որ նա խիստ խարդախ կին լինի։ Սակայն մայրիկս աւելացրեց, որ վաղը նրան և աղջկան Ճաշի է հրաւիրել (լսելով «աղջկան» խօսքը, ես քիթս խոնարհեցի ափսէիս վրայ),—որովհետև, էլի օրքան չլինի, վերջապէս հարևան է և անուն ունի։ Հայրս դրան պատասխանեց, որ այժմ չիշում է, թէ ում է այդ տիկինը, թէ երբեմն ժամանակը Ճանաչելիս է եղել հանգուցեալ իշխան Զասեկինին, որը լաւ կրթուած, բայց դարտակ և կռւան մարդ է եղել. թէ հասարակութեան մէջ նրան կոչում էին («Պարիզեցի») «le Parisien»՝ երկար ժամանակ Պարիզում ապրած լինելուն համար. թէ

*) Տես «Նոր-Դար» № 199.

Քրոնիկոն

Մեզ խնդրում են յայտնել, որ պեկտ. 22-ին, պ. Գ. Սունդուկեանցի քսանհինգ ամեակի տօնախմբութեան օրը, Թիֆլիսի Ժողովարանում յարգելի յօբելեարի պատուին սահմանւում է հացկերոյթ (բանկէտ) և լինելու։ Այդ հացկերոյթին նոյնպէս և գաւառներից յիշեալ յօբելեանին մի որ և է կերպով մասնակցել ցանկացողները պէտք է վաղօրօք դիմեն նշեալ Նազլէօն Ամատունուն։

—

Դերբէնդից.—Այս տարի շնորհիւ սիտլայի, գինիները Թանկ են ծախւում։ Ամէն վեդրան 2—3 րուբլի Ռուսկայում և 75 կ.—1 ր. 20 կոպէկով տեղումս էր ծախւում, իսկ այս տարի հենց 1 ր. 20 կ.—2 րուբլով այստեղ է ծախւում։

Ղարաբաղի պ.պ. Ն. և Ա. Սողոմոնեաններից, որոնցից մէկը գինեգործութեան է սովորել Ֆրանսիայի Մօնպելիէ քաղաքում, մեծ քանակութեամբ ընտիր գինիներ են գնում և, ինչպէս լսել ենք, նրանց աղնուացնելուց ու պատրաստելուց յետոյ մատղը են արտասահման տանելու։ Եթէ այդ ցանկալի միտքը իրագործուի, այն ժամանակ, վերջապէս, Դերբէնդի գինին կարժանանայ արտասահմանի երես տեսնելու։

—

Պ. Գաբրիէլ Սունդուկեանցի քսան և հինգ ամեակը, ինչպէս ծանուցել ենք, պիտի տօնուի պեկտ. 22-ին։ Այժմ յայտնում ենք, որ այդ օրը չը պիտի ներկայացնեն յօբելեարի նոր երկը՝ Ամուսիններըը, այլ մի ուրիշ երկ։

—

Թիֆլիսի Քաղ. վարչութիւնը գտնանը լանդրամատոյց էր եղել կառավարութեան, որ արքունի գանձարանից Թիֆլիս քաղաքին տրուի 156,500 ր. փոխ։ Ներքին գործերի մինիստրն այդ մասին գործերը ներկայացրել է Ֆինանսների մինիստրութեան։ Ֆինանսների մինիստրութիւնը, «Кав.»-ի ասելով, մերժել է Թիֆ. քաղաքի այդ խնդիրը նախ՝ որովհետև քաղաքը խրուած է ամբողջապէս պարտքերի մէջ, երկրորդ՝ այդպիսի գործերի համար նշանակուած 6,000,000 արտակարգ գումարն արդէն գործադրուած վերջացած է։

—

Ուրբաթ, նոյեմբերի 25-ին Թիֆլիսի նահանգական դատարանում յայտարարուեց Ագիգեանի և Էլիսեեւգիլեանցի գործի վերջնական վճռի բանաձևը։

—

Արդաբիլից (Գաբակատան).—Այժմ մեր ուսումնարանը բաւական լաւ դրութեան մէջ է և ունի մօտ 1000 րուբլի (մօտ 300 Թուման). աշակերտների Թիւը հասնում է 20 հոգու։ Ռուսական Աստարայից էլ մի հոգի ուղարկուած է մեր ուսումնարանը. նոյնպէս և Թուրքացած Ալմատը իւր որդուն ուղարկում է մեր ուսումնարանը, որ մինչև եկեղեցի է գնում աշակերտների հետ։

—

«Правит. Вѣст.»-ում տպուած է. «Բագու քաղաքում հրատարակուող «Каспій» Թերթի խմբագիր, 1888 Թ. նոյեմբերի 15-ին, հաստատուած է պաշտօնաթող գնդապետ Պետր Տրոֆիմովիչ Գօրդեեւսկին»։

—

Շաբաթ օրը, նոյեմբերի 26-ին, «Լօնդօն» հիւրանոցում անձնասպանութեան փորձ արաւ Բագուի նահանգական դատարանի անդամ Ն. Ի. Սվինկինը, «Каск.» Թերթի նախկին հրատարակիչը։ Նա նոր էր վերադարձուած Թիֆլիս եկել։ Ատրճանակի գնդակը վիրաւորել էր դժբաղդի կողքը, սրտից ներքև։ Նոյեմբերի 27-ին վաճառանոցում քաղաքային հիւանդանոցում, առանց յայտնելու իր անձնասպանութեան պատճառը։

—

Բաքուից.—Նոյեմբերի 18-ին, Ճաշից յետոյ, ժամի 4½-ին, այստեղ մի քանի րոպէ անձրևելուց յետոյ, քաղաքիս արևելեան կողմում, հորիզոնի վրայ, երևեցաւ մի հրաշալի ծիածան, որը բոլորովին կլոր և գնդաձև էր և այնպիսի վառ գոյներից էր բաղկացած, որ մարդս դրան նայելով, զմայլում էր։ Դրանից փոքր ինչ հեռու, նոյն ուղղութեամբ, հորիզոնի վրայ տարածուած էր դարձեալ մի ծիածան, աւելի մեծ շրջանագծով և մռայլ գոյներով։ Դրանք մօտ քսան րոպէ այդպէս մնացին։ Տեղիս ծերերը պատմում են, Թէ երբենց կեանքում, ոչ այնքան գեղեցիկ և բոլորաձև և ոչ էլ երկուսը միանգամից ծիածան են տեսել։ Սնոտիապաշտ մարդիկ դրանից ժամագիներով հին ձևի գլխազարդ։ Նա անմիջապէս սկսեց իւր մուրհակների մասին խօսել, հառաչում էր, գանգատւում էր իւր աղքատութեան վրայ, խնդրելով զահլա էր տանում, բայց ամենևին չէր քաշւում,—նոյնպէս աղմուկով քթախոտ էր քաշում, նոյնպէս համարձակ շուռ էր գալիս և տրորւում աթոռի վրայ։ Նա կարծես ամենևին չէր էլ մտածում, որ ինքն իշխանուհի էր։ Բայց Զինայիդան, ընդհակառակը, շատ խոժոռ, համարեա զոռոզ, իսկական իշխանուհու նման էր պահում իրեն։ Նրա դէմքի վրայ յայտնուեց սառն անտարբերութիւն և վսեմութիւն—և ես չէի Ճանաչում նրան, չէի Ճանաչում նրա հայեացքները, նրա ժպիտները, Թէև նա նոյն իսկ այդ նոր կերպարանքով էլ գեղեցիկ էր Թւում ինձ։ Նա հագել էր բարձրահաս Թեթև շքեղազգեստ բաց-կապոյտ շերտերով. անգլիական ձևով սանրած մազերը ընկած էին ալեերի վրայ խոպոպաններով. այս սանրուածքը սազում էր նրա դէմքի սառ արտայայտութեան։—Ճաշի վրայ հայրս նստել էր նրա կողքին և երեն յատուկ պերճ և հանգարտ քաղաքավարութեամբ զբաղեցնում էր նրան։ Հայրս հազիւ երբեմն նայում էր նրա վրայ—նա էլ նոյնպէս հազիւ երբեմն նայում էր հօրս, և այն՝ խիստ օտարոտի և համարեա Թշնամաբար։ Նրանք Ֆրանսերէնն էին խօսում.—ինձ, ինչքան յիշում եմ, զարմացրեց Զինայիդայի արտասանութեան մաքրութիւնը։ Իշխանուհին Ճաշի վրայ էլ, առաջուայ նման, ոչինչից չէր քաշւում, ուտում էր շատ և դաղաքայլ առաջ էր գնում Ճանապարհով։ Նա ինձ չնկատեց։ Ինչ էր մնում, որ Թողնէի անցնէր գնար. բայց յանկարծ գլխի ընկայ և հազացի։

Նա ետ նայեցաւ, բայց չկանգնեց, ձեռքով մի կողմ ձգեց իւր կլորը, յարդեայ փեղոյրի լայն, կապոյտ ժապաւէնը, նայեց ինձ, Թեթևակի ժպտաց և կրկին աչքերը գրգին յառեց։

Ես գլխարկս հանեցի և, տեղումս մի փոքր ժամանակ անախորժ դրութեամբ կանգնած մնալուց յետոյ, սերտը վշտով ծանրացած, հեռացայ այդտեղից։ «Que suis-je pour elle» (Ինչ եմ ես նրա համար) մտածեցի ես (Աստուած գիտէ Թէ ինչի) Ֆրանսերէն։

Եւ ահա յանկարծ ինձ ծանօթ քայլի ձայները.—հանս դարձայ—տեսնեմ հայրս իւր արագ և Թեթև քայլուածքով մօտենում էր ինձ։

—Սա է օրիորդ իշխանուհին,—հարցրեց նա ինձ։

—Այո։

—Մինչ դու նրան Ճանաչում ես։

—Այսօր առաւօտը ես նրան իշխանուհու մօտ տեսայ։

Հայրս կանգնեց և, յանկարծ կրնկան վրայ շուռ գալով, ետ դարձաւ։ Զինայիդային հաւասարուելով, նա քաղաքավարութեամբ բարևեց նրան։ Զինայիդան էլ բարևեց հօրս. նրա դէմքի վրայ զարմանքի նշաններ երևցան, և գիրքը վայր Թողեց։ Ես տեսայ, Թէ ինչպէս նա աչքերով հետևում էր հօրս։ հայրս միշտ հապնում էր շատ չքեղ, իւրատեսակ և պարզ. երբէք նրա կապմուածքն այնքան վայելչակազմ չէր երևացել, երբէք նրա մօրուքագոյն գլխարկն այնքան գեղեցիկ դրուած չէր նրա, հազիւ նօսրացած, գանգուրների վրայ։

Ես սկսայ մօտենալ Զինայիդային, բայց նա վրաս անգամ չնայեցաւ, կրկին բարձրացրեց գլուխը և հեռացաւ։

VI

Ամբողջ երեկոն և յաջորդ առաւօտն ես անցկացրի տխուր Թմբրութեան մէջ։ Ցիշում եմ, ես չանք էի անում աշխատելու, և—ձեռս առայ Կայդանովը—բայց ի զուր էին այդ հնչակաւոր ձեռնարկի ընդարձակ տողերն ու երեսները անցնում առաջիցս։ Տասն անգամ վրայ-վրայ կարդացի «Ցուլիոս Կեսարը հնչակաւոր էր իւր պատերազմական արուեստամբ» խօսքերը—ոչինչ չհասկացայ և մի կողմ ձգեցի։ Ճաշից առաջ ես կրկին օձուեցայ իւղով, հագայ բաճկոնս և կապեցի փողպատս։

—Ա՛յդ ինչի ես հագել,—հարցրեց մայրիկս։—Դու դեռ ուսանող չես և դեռ Աստուած գիտէ, Թէ կարող ես քննութիւն տալ։ Նոր չէ, որ քեզ համար բաճկոնակ կարել տուի։ Ես դէն չպիտի ձգուի։

—Հիւրեր պիտի գան, մինիմինեցայն ես համարեա յատահատաբար։

—Դատարկ բան է. ինչ հիւրեր։

Պէտք էր հնազանդիլ։ Բաճկոնս հանեցի, հագայ բաճկոնակս, մնայն փողպատս չհանեցի։ Ճաշից կէս ժամ առաջ իշխանուհին եկաւ իւր աղջկայ հետ. պատահաբար արդէն ինձ ծանօթ կանաչ շքեղազգեստի վրայից ձգել էր դեղին շալ և գլուխը դրել էր կրակի

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.—Ֆրանսիա-Ռուսաստան ընկերական հարաբերությունների մասին մեր հրատարակած հոդվածների առթիվ մեզ գրում են հետևյալը.

Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները ամենևին էլ չեն հիմնված ինչ-որ պայմանագրերի վրա, այլ ամենից առաջ ժողովուրդների ընդհանուր համակրանքի վրա։ Ֆրանսիայի ժողովուրդը ոչ միայն ցանկանում է, այլև պահանջում է, որ իր կառավարությունը ամեն կերպ ջանա պահպանել Ռուսաստանի հետ ունեցած բարեկամական հարաբերությունները։ Ֆրանսիայի կառավարությունը, որ ամենևին էլ չի ցանկանում կորցնել ժողովրդի համակրանքը, ամեն կերպ ձգտում է պահպանել Ռուսաստանի հետ ունեցած բարեկամական հարաբերությունները։ Ֆրանսիայի կառավարությունը

ՀԱՅՐԱՆՅԱՑ ՍՈՒՆ

Տպագրվում է ամեն Կիրակի։

Խմբագիր-հրատարակիչ Ս. Ա. Ալամդարյան։

Տպարան «Ազգ»-ի, Ռոստոմի փող. № 1։

Տարեկան գինը 5 ռուբլի։

1888 № 200

ՀԱՅՐԱՆՅԱՑ ՍՈՒՆ

Տպագրվում է ամեն Կիրակի։

Խմբագիր-հրատարակիչ Ս. Ա. Ալամդարյան։

Տպարան «Ազգ»-ի, Ռոստոմի փող. № 1։

Տարեկան գինը 5 ռուբլի։

1888 № 200

պէս առաջ տանել. եթէ մի քիչ էլ սրահում Թոյլ լինի, նրա մայրենի լեզուն և հաստատուն բնաւորութեան նախապատրաստութիւնը կը յաղթէ բոլոր խոչընդոտներին։ Ցեսէք, այն ընտանիքը, որ լաւ է դաստիարակել և իւր որդին քիչ թէ շատ նախապատրաստած է՝ օտարութիւն գնալու, ուրախ է այսօր, իսկ մինչը...

Մի այլ անգամ ղէպք կունենամ և նրա մասին խօսելու, թէ իմ կարծիքով ինչ կարելի է սպասել մեր ժողովրդական և ապագայ բժշկական դպրոցից։

Յ. Տ. Մ.

Ալէքսանդրապոլ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ը ԱՒՏՐԻԱՑՈՒՄ ԵՒ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ։

—

Սրանից ճիշդ քառասուն տարի առաջ, 1848 Թուականի նոյեմբերի 20-ին (նոր տումարով դեկտեմբերի 2-ին) աւստրիական Ֆրանց-Յոզէֆ կայսրը՝—իւր հօրեղբօր՝ աւստրիական Ֆերդինանդ կայսրի տեղ բարձրացաւ աւստրիական գահը, քաղաքական խառնակութիւնների և խռովութիւնների մէջտեղ։ Նա բարձրացաւ գահ դեռ իւր հօրեղբօր և հօր կենդանութեան մէջտեղ։ Անցան երկար քառասուն տարիները և Ֆրանց-Յոզէֆ կայսրը և ժողովուրդը տօնեցին այդ գահակալութեան 40 ամեայ յոբելեանը—բայց առանց մի և հանդիսաւոր տօնակատարութեան, առանց ոևէ շուքի—նոյն իսկ երեն, Ֆրանց-Յոզէֆ կայսրի ցանկութեամբ, որ լիովին համապատասխանում էր նրա կառավարութեան եղանակին՝—Ֆրանց-Յոզէֆ կայսրը միշտ խաղաղ առաջադիմութիւնն և երկրի ժողովուրդների ազատ զարգացումը դերադասել է պատերազմական շլացուցիչ փառքերին։ Ճշմարիտ է, պատերազմական ձեռնարկութիւնները չեն պակասել աւստրիական կառավարութեան և Աւստրիան համարեա միշտ յաղթուել է սկսած պատերազմների մէջ, բայց արտաքին նրա քաղաքականութիւնը միշտ յաղթող է հանդիսացել։ Ֆրանց-Յոզէֆ կայսրը գահ բարձրանալուն պէս անմիջապէս ստիպուեց ընկճելու իւր հպատակ ազգերից մինի—ունգարացիների ապստամբութիւնը և անմիջապէս սկսեց կերպարանափոխել երկրի ներքին կեանքը և վտանգը յաղթանակ տարաւ միջնադարեան մնացորդների, կազմութիւնների դէմ սկսած վերանորոգութեամբ, որոնք մինչ այդ արգելք էին լինում աւստրիական ժողովուրդների առաջադիմութեան։ Վարչական եղանակները և գատաւարութիւնը հիմնական կերպով փոփոխուեցան. երկրագործական աշխատութիւնները ազատուեցան կաշկանդանքներից. ամենալուրջ ուշադրութիւն դարձրին լուսաւորութեան առաջադիմութեան վրայ. աւստրիական հպատակ ազգերը մի քիչ աւելի ազատ շունչ քաշեցին և այդ բարեփոխութիւնները ամենաարտերաք ազդեցութիւն գործեցին երկրի ֆինանսների քայքայուած դրութեան վրայ։ Բայց Աւստրիան շուտով սկսաւ խառնուել «արեւելեան» կոչուած խնդիրների մէջ, ուստի ստիպուեցաւ զինուել և նորանոր վտղեր ծախսել։ Ղրիմեան պատերազմից յետոյ Աւստրիան փառաւոր յաղթանակ տարաւ առանց պատերազմ վարելու. նա գրաւեց Դանուբեան իշխանութիւնները և վիննան դարձաւ արեւելեան խնդիրների մասին դիւանագիտական բանագնացութիւնների կեդրոն։ Սակայն Իտալիայի և Գերմանիայի դէմ վարած պատերազմների մինջոցին նա կորցրեց իւր իտալական գաւառները և գերմանական գաւառների վրայ ունեցած ազդեցութիւնը և նախապատրաստութիւնը։ Այնուհետև Աւստրիան պատերազմներ չվարեց, և բոլոր ուշադրութիւնը դարձրեց երկրի ներքին կեանքի վրայ։ Վերջացաւ երկրի մէջ կեդրոնականութիւնը և մի ազգի գերիշխանութիւնը միւս ազգերի վրայ, կամացկամաց ունգարացիները, լեհացիները, չէխերը իրենց համար ընդարձակ ճանապարհ բացին դէպի ինքնուրոյն կեանքը և սկսան հաւասարապէս մասնակցել երկրի կառավարութեանը։

***

Նոյն նոյեմբերի 20-ին մի ուրիշ նշանաւոր հանդէս էր կատարւում և Ֆրանսիայում.—Այդ օրը Պարիզում կատարեցին հասարակապետութեան քաջամարտիկ զօրականներից մինի—Բօդէնի մահուան տարեդարձը, որ զոհ գնաց հասարակապետութիւնը երկրի բռնակալների դէմ պայքարելուն համար։ Ամբողջ Ֆրանսիայում լրջմիտ մարդիկ, Ֆրանսիական կառավարութիւնը և մամուլը սոսկիկ վախի մէջ էին, որ մեծ անկարգութիւններ կարող են ծագել այդ օրը։ Մանաւանդ երկիւղն աւելի ևս սոսկանում էր նրանով, որ Բուլանժիէի կուսակիցների հասցէին, որոնք միահամուռ ոգևորութեամբ ընդունուեցան։ Սակայն ներկայ հասարակապետութեան հակառակորդների պարագլուխ Բուլանժիէն այդ օրը հեռացել էր Պարիզից. նա գնացել է Նևէր, ուր իւր կուսակիցները բանկէտ էին կազմել։ Բուլանժիէի դրութիւնը, յերաւ, բաւական ծանր էր. նա օրըստ հասարակապետական, ինչպէս երեն անուանում է մեզ նման Թէ ի դէպ և Թէ ոչ էլ դէպ, ստիպուած պիտի լինէր Բօդէնի յիշատակին կազմուած տօնախմբութեան ներկայ լինելու. իսկ հասարակութեան մի նշանաւոր մասը հակառակ լինելով նրան, անշուշտ ցոյցեր պիտի անէր, կռիւ պիտի բարձրանար։ Բացի այդ, նա որպէս դաշնակից բօնապարտականներին, պէտք է հետևի մնար հասարակապետութեան անելու ցոյցերից, և նա հեռացաւ գնաց Նևէր։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** Կանադայի կառավարութիւնը, կվեբէկի պատգամաւորների առաջարկութեամբ, Թոյլ է տուել կամուրջ-կայի կոմսութեան մէջ եղած Նահանգը Ֆրանսիական նշանաւոր գօկտօր Պաստէրի անունով անուանելու։

*** Լեմբերգի կանանցից մինը բանական նշանաւոր գումար է նշանակել նրան, ով որ ամենից լաւ մի գիրք կը գրէ «կնոջը դիւը գալու արհեստը» անունով։

*** Մօտերքս Սպայում կատարուած գեղեցկուհիների ցուցահանդէսից յետոյ, բազմաթիւ հետևողներ երևացին։ Այսպէս օրինակ, բացի առաջնիկայ տարին նոյն Սպայում, Ամերիկայում և Վաշինգտոնում կատարուելիք նոյնպիսի ցուցահանդէսներից, գալ յունվարի 12-ին պիտի գեղեցկուհիների ցուցահանդէս լինի և Վիեննայում, իսկ մի հանաքչի էլ, ինչպէս լսում է, ուզում է Թիֆլիսում այդպիսի ցուցահանդէս կազմել։

*** Հարիւր տարի անցաւ այն օրից, երբ իտալացի Բեկկարիան առաջին անգամ Եւրոպայում վճռական ձայն բարձրացրեց մահուան պատժի դէմ։ Ներկայումս արդէն մեռքը երկանացած է,—իտալական պատգամաւորների ժողովի վճիռը՝ մահուան պատիժն ոչնչացնելու մասին, հաստատուել է սենատից։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՁԱՐՁՈՅ, 27 նոյեմբերի.—Իսահակ խանը վերջնականապէս բնակութիւն հաստատեց Կարկի քաղաքից հինգ վերստ հեռու. նրա հետ փախչող 2000 աւազանները ցրուեցան բուխարական խանութեան մէջ։

Մետաքսեղէն գազային ապրանքների «Վ. Զաւէրզի, Դ. Մ. Բէյլման-Դրուսիւէյսկի և ընկ.» ներկայացուցիչները Բուխարայում և բուխարական խանութեան զանազան առևտրական կեդրոններում ամբարները բացին։ Վարշաւեան շրջանից ստացուող գազային ապրանքները շատ լաւ են վաճառւում։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇՈՒԱՒԵՐՅԻ ԳՐԻԳՈՐ (Գիգոլ) ԱՄԻՐԲԷԳԵԱՆ (արհեստաւոր)։ Երկու ամիս առաջ շուլաւերցի Գրիգոր (Գիգոլ) Ամիրբէգեանը Թիֆլիսից Բաթում գնալով մինչև օրս նրա կինը նրանից նամակ չէ ստանում և մնացել է իւր զաւակի հետ անօգնական և թշուառ դրութեան մէջ։ Բարի մարդիկ, որոնք Գիգոլին ճանաչում կամ տեսնում են, թող յայտնեն նրան, որ իւր կինը գիր չէ ստանում և անհամբեր նամակի և տեղեկութեան է սպասում։

(Խմբ.) 3—2

Պետերբուրգի բժշկական վարչութեան Թոյլատրած

„ՀԱԻԱՆՆԱ“ ԲԱՄԲԱԿ

Ծխողների համար,

որ դադարեցնել դանակի ծխամոլութիւն, հեռացնում է նիկոտինը, որով պատճառում է ծխողի առողջութիւնը նրանց վնասակար ազդեցութիւնից և լաւացնում ծխախոտի համը։

Մի Խղճաթիղթի գինն է 10 կոպ.

Ծախւում է բոլոր ծխախոտավաճառների մոտ։ Գլխաւոր պահեստը մեծ քանակութեամբ առնողների համար—Ալէքսանդր Վէնգէլի մօտ, Պետերբուրգում, Կազանսկայա փողոց, 3. Մոսկվա, Զեատրե պրոսպեկտ, Մաշկով փողոց, տ. Սօլոմենցովներ։

Պատ. օտարաքաղաքացիներին 3 տարբեր ուղարկում է 25 Թղթադրամիկ Վաճառականներին հատուկ զեղչ է լինում։

Կէղծումներից զերծ լինելու համար, խնդրում եմ դնելիս ուշ դարձնել հետևող Ս. Բօգինդյանի ստորագրութեան և «A. W.» գլխատառերին ամեն մի արկղիկի վրայ։

Ալէքսանդր Վէնգէլ։

(Մ.) 3—1

ԶԳԱԽԻԺԵԱՑ

ՈՏՔԻ ԿՈՇՏԻ ՍՊԵՂԱՆԻ

Ա. ԲԷՐԴՅՈՒՅԻ

Ոտքի ամէն տեսակ կոշտ և եղունգ մի քանի օրուայ մէջ ոչնչացնելու համար։ Մատչուում է շատ դեղատներում և դիպուածին ու ձգտմամբին ծագպէնների մէջ։ Գլխաւոր գեպօն—Նեվսկայա դեղատուն, Անիչկովի կամրջի մօտ՝ Պետերբուրգում։

M. 50—10

PHOSPHATE DE FER

De LERAS, Docteur ès-sciences.

Դեղագործ Լերասի

ՖՕՍՖԱԹ ԴԷ ՖԵՐ

Այս դեղն արիւնն և ոսկրները վերանորոգելու և զօրացնելու համար գործածուած դեղօրիէից ամենաազդուն է։ Ոչ պնդութիւն է պատճառում, ոչ ստամոքսն է յոգնեցնում և ոչ էլ ատամներն է սևացնում, միշտ մեծ աջողութեամբ բժշկում է կանանց սպիտակ հոսումը, ստամոքսի ցաւը, ժոգունութիւնը, արեան տկարութիւնը, մերկ բանիւ այն ամեն հիւանդութիւնները, որոնց ենթակայ ենփարուկ կանայք և դեռատիթեմ աղջիկները և մանուկները, երբ ժոգոյն, անարիւն, Թուլամորթ և անախորժ են։

Ծախվում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մոտ։ Т

(М.) զ 27—9

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մար. գն. 3 ժ. 21 վ. յ.
Աղստաֆա, խառն. գն. 8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Աղստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ԳՕԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏԻ ՎՐԱՑ

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ

ՆՈՐ ԲԱՑ ԱՐՏԱԾ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Մ'իրզոյեանի տանը, Նահանգական պողոտայի դէմ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ստացուած է արտասահմանեան և ռուսական նոր՝ տղամարդկերանց և տղաների հագուստ։

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՈՒԱՑ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Գօլովինսկի պրօսպեկտի վրայ, Մ'իրզոյեանի տանը (նախկին Բելլէյի)

ՄԱԳԱԶԻՆԸ ՓԱԿՈՒԵԼՈՒ Ա.ՌԹԻԻ

Վերջնական Էժան վաճառքի է նշանակած

ՄԵԾ ԶԻՋՈՒՄՈՎ

Մինչև դեկտեմբերի 24-ը, այնտեղ մնացած ապրանքի։

ՆԵԼԱՆՁԳՈՒՐՈՒԹԻՒՆ

Խոնարհաբար խնդրվում է այն անձերից, որոնք Խոյնով գալով կը ցանկանան «Ռ-ֆէյ» հիւրանոցն իջնել, պահանջեն կառավարներից, որ իրանք նրան անպատճառ տանեն Բլինայա փողոցը (Անիվներսիտետսկայա անկիւնը), ուշադրութիւն չդարձնելով նրանց խօսքի վերայ, թէ Ռուֆի հիւրանոցի բոլոր սենեակները բռնուած են կամ նորոգվում են և այլն, որոնք առաջանում են միայն նրանից, որ Ռուֆի հիւրանոցը կառավարներին ոչինչ աւելորդ վարձատրութիւն չէ տալիս ուղևորներին տանելու համար։

ՍԵՆԵԱԿՆԵՐ 75 ԿՈՊԵԿԻՑ ՄԻՆՉԵՒ 5 Ր. ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՀԻՒՐԱՆՈՑԻ ԲՈԼՈՐ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ. ՓԱՌԱՒՈՐ ՋԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՇՇԱՐԱՆ. ԽԻՍՏ ՁԱՓԱՒՈՐ ԳՆԵՐ։

(М. 19,118) 13—13

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ նրա տեսնում ներկայ տարուայ դեկտեմբերի 2-ին, ցերեկուայ ժամը 12-ին, կը լինի աճուրդ՝ Հաւլաբարի քաղաքապատկան գետինը կապալով տալու, 1889 թուի յունվարի 1-ից մինչև 1892 թուի յունվարի 1-ը։

Եթէ Հաւլաբարի բնակիչներից, որոնք անասնապահութեամբ են պարապում, ընկերակցութեամբ կը ներկայանան աճուրդին, նրանց Թոյլ կը տրուի աճուրդին մասնակցելու առանց գրաւականի, միայն թէ միմեանց երաշխաւոր լինին քաղաքի առաջ։

Պարմանագրի մանրամասնութիւնների հետ կարելի է ծանօթանալ Վարչութեան շինութեան մէջ՝ ամեն օր, ժամը 9-ից մինչև 2-ը ցերեկուայ, բացի ոչ-ատենական օրերը։

3—2

Дозволено цензурою. Тифлисъ, 28 го Ноября 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրատենակի Типографія конторы газеты Кавказъ, Гор. ир., д. Чичахова